

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 37

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագիրն է կես օսմ. ոսկի քե' Կ. Պոլսոյ եւ քե' գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մեկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավաճառներուն ու Պահչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն փոյ :

Զեռփէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍՅԻ

ՀԱՍՏԵ

در علیہ غلطہ « ماسیس » غزنی سی ادارہ سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍՍԻՍ » Ի

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ

Մ. ՏԷՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 21, Ղալաթիա, Վոյլոսա փողոց, Գաղղիական նամակատան դէմ

Խիստ աժան զինքերով կը ծախէ Ֆլանէլ, քթան եւ բիքէ շապիկներ, փողկապ, օձիք, թեւնոց, կոճակ (ոսկեղօծեալ ու պարզ), գուլպայ, թաշկինակ, զմելի, խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց ամենաբնական տեսակներ :

Միշտ խնամով ու դիւրամատչելի գիներով կը պատրաստէ նաեւ չափու վրայ ամէն տեսակ շապիկ, զիշերազգեստ, օձիք, թեւնոց, ու կը կատարէ ներքին ճերմակեղինաց յանձնարարութիւններ :

Հանրածանօթ Մ. ՏԷՐ ԴԱԻԻԹԵԱՆ շապիկի դործարանը նորաձեւութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան ու գիներու տարապայման աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի տուն մըն է :

1—15

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ. 1901. Աշխատասիրեց ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ. — Այս տարի գրեթէ բոլորովին նոր պարունակութեամբ եւ խնամուած տպագրութեամբ հրատարակուած է, Մատթէոսեան տպարանէն, պատկերազարդ : Զանազան գիտելիքներու բաժնին գլխաւոր նորութիւնն է Ուսումնասիրութիւն մը Կ. Պոլսոյ Հայոց եւ իրենց Պատրիարքներուն վրայ : Թուականներու հատուածը շատ աւելի ճոխացած է : Նոյնպէս, գործի մարդոց, ընտանիքներու վերաբերեալ մասերը, վիճակագրական տեղեկութիւնները եւայլն : Գին 10 դրուշ :

1—4

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի մեր գաւառաբնակ այն բաժանորդներէն որոնք հասցէի փոփոխութիւն ունեցած են վերջին առեւններս, որ հաճին խմբագրութեանս իմացնել իրենց նոր հասցէն :

Այս առթիւ, հարկադրուած ենք հրապարակային հրաւեր մը ուղղել մեր այն գործակալներուն ու բաժանորդներուն որոնք առկախ հաշիւ ունին Մասիսի Տնօրէնութեան հետ, յիշեցնելու համար անլճար բաժանորդագիւններու առաքման ստիպողական պէտքը :

ՄԱՍԻՆ

49^{րդ} ՏԱՐԻ

— 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900 —

ԹԻԻ 37

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զուգադիպութիւն մը. ԵԴՈՒՍՐԴԻ. — Վաղուան համար. ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՆՃԵԱՆ. — Միքիկ (Նորաշէն). Տ. Ա. : — Բժշկական Քրոնիկ. ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ. — «Ի՞նչ դիւրին ե եղեր». ՔԱՌՄԷՆ ՍԻԼՎԱ. Թարգմ. ՊԵՐՃՈՒՀԻ. — Բանաստեղծութիւններ. Անունդ. Կ. ՈՍԿԵԱՆ. Ծովափը. Մ. Ո. : — «Մասիս»ի Յուշատետրը:

ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹԻՒՆ ՄԸ



«Անցեալ չարթու, ֆէնէրի Մայր Վար-
«Ժարանին մէջ յայլուն հանդէս մը կատար-
«ուեցաւ, չափական եւ բնական զիտութեանց
«ուսուցիչ Պ. Անարէ Սրաթարիսի ուսուցչաւ.
«կան ասպարէզը ընդգրկելուն 40րդ տարեւ.
«գարծին առթիւ: Ներկայ էին Յունաց Պատ-
«րիարքական Փոխանորդը, մէկ քանի մետ-
«րապոլիտներ, բազմաթիւ յոյն ուսուցիչներ
«եւ ստուար բազմութիւն մը: Բանաստեղծ-
«թիւններ արտասանուեցան եւ Պոլսոյ Սիլ-
«լոզոսներուն կողմէ խնդակցական ուղերձներ
«մատուցուեցան Պ. Սրաթարիսի՝ իր կրթաւ.
«կան բազմամեայ ծառայութեանցը համար:»

Ապահովագէտ, Ներքին Լուր մը տալու
համար չէ որ օրաթերթէն կրնդ օրինակեմ այս
քանի մը տողերը որոնք առնջութիւն մը պիտի
չկրնային ունենալ մեզի հետ, եւ հայ ընթեր-
ցողը այնքան միայն պիտի հետաքրքրէին
որքան յոյն մետրապոլիտի մը թեմական այ-
ցելութեան լուրը կամ յոյն վարժարանի մը
մրցանակաբաշխութեան նկարագրութիւնը,
եթէ Պ. Սրաթարիսէն առաւել կամ նուազ
արժանիքի տէր հայ ուսուցիչ մը, ինքն ալ
քառուռն տարուան դասախօս, այս օրերուն
մէջ երկոտ դիմում մը ըրած չըլլար Ուսում-
նական Խորհուրդին՝ պարգևու համար իր
ծերութեան ու անգործութեան առաջ բերած
կարօտ վիճակը:

Այս ուսուցիչը այն երկրորդական ու ան-
ծանօթ վարժապետներէն մէկը չէր, որոնց
անունը լսողը աչքի թարթալում մը կունե-
նայ՝ հարցնել ուզելով կարծես թէ «Ո՞վ է,
ո՞ր թաղին մէջ աշխատած է»: Իր մասնա-
ճիւղին՝ թուարանութեան ու գրահաշուի մէջ՝
քանի մը սերունդներ կրթած, ժամանակա-
կից Սիմոն Միքայէլեանի եւ Յարութիւն Թիւ-
եանի, եւ անոնց չափ համարու հանած իր
գործունէութեան տարիներուն մէջ, պատկա-
ռելի դէմք մըն է որ կը ներկայանայ մեզի:

Գուշակեցիք անշուշտ թէ Գարրիէլ Ներ-
շապուհի վրայ է խօսքս, — ազգին լուազոյն
տարրերուն պատկանող ու իրենց ասպարէզ-
ներուն մէջ գիրք մը շինած անձերու նախկին
դասատուին վրայ որուն համար «նուիրահա-
ւաքութիւն մը ընելու» պէտքը չեղաուեցաւ
վերջապէս Ուսումնական Խորհուրդին որոշ-
մանց կարգին մէջ, թէեւ լուազոյն պիտի
ըլլար խնայել այդ տխուր բացատրութեան
հրապարակումը՝ եթէ այսպէս ապարդիւն
պիտի մնար ան:

Եթէ քսան տարի մը կայ որ չէք տեսած
Գարրիէլ Ներշապուհը, այն փիլիսոփայի գըւ-
թով ու լուրջ կերպարանքով մարդը որուն
դասախօսութիւնները causerieի մը ձեւը կառ-
նէին յաճախ, — դրական նիւթերու վրայ
causerieներ, բայց միշտ համով, հստով ու

հմտալից, — եւ յանկարծ հանդիպիք իրեն, ձեր դէմը պիտի գտնէք նոյն դէմքը ու նոյն կերպարանքը, սա տարբերութեամբ, — կեանքի փոփոխութեանց ամէնէն տպաւորիչ նշանը, աւա՛ղ, — որ ճերմակ փառաւոր մօրուք մի կը ծածկէ հիմակ իր կուրծքը, ու խորշմները շատցած, խտացած են ճակտին վրայ, իր ամբողջ անձին տալով երեւոյթը յոգնած ձերունիի մը, տարիքով բեռնաւորուած, որ յուսահատ մը չէ դեռ ու աչքերուն մէջ կը պահէ՝ կեանքի փոթորիկներուն դէմ անխուփ մնալ փորձողի մը, զօրաւոր հոգիի տէր համակերպողի մը նայուածքը:

Բայց մինչեւ ե՞րբ այս համակերպումը:

Գարբիէլ Ներշապուհ խառնեղջի դժբաղդ վարժապետին պէս չի մտածեց, որ դառնութեան ու ջղագրգռութեան վայրկեանի մը մէջ վերջ տուաւ կեանքին: Ինքը, աւելի՛ հանգաւոր մտքի ու մեծ փորձառութեան տէր, իր ուսուցչութեան երկար շրջանին շատ մը ժամերը իր դեռատի ու վառվռուն աշակերտներուն խմաստութեան յորդորներ տալու նուիրած մարդ, չի չփոթեցաւ բնաւ ձախողւած: Ներու առջեւ: Երբ թաղային քանի մը վարժարանները, որոնց բազմաշխատ դասատուներ, ուղեցին երկուստարդ ուսուցիչներու յանձնել չափական գիտութեանց աւանդման հոգը. քաջուեցաւ հեռաւոր արուարձանի մը մէջ ու մասնաւոր դպրոց մը հաստատեց. տարիներ վերջը, երբ փակեց իր մասնաւոր դպրոցը, նիւթական պատճառներով, թէեւ բաւական արդիւնք ցուցնելէ ետքը, նորէն չի յուսահատեցաւ. եւ իր ալեւոր հասակը քաշկռտեց մինչեւ գաւառի մը անկիւնը ուր վերսկսու գաղափարներ. հիւանդութիւն մը եկաւ յանկարծ խանգարել իր մենատէրի ճաշակները, որոնցմով ինքն իր մէջ ամփոփուած կը մնար՝ շատ աշխատելու եւ քիչով գոհանալու տրա-

մադիր: Կիսովին ապաքինած, Պոլիս վերագարձաւ, այս անգամ այլեւս անկարող զգալով ինքզինքը՝ իրրեւ գործօն ուսուցիչ ներկայանալու վերջին ճիգին. ուժերը կը սպառէին եւ հանգիստի պէտքը կը ծանրանար ուսերուն վրայ:

Ուսումնական Խորհուրդին ներկայացաւ: Մնացեալը գիտէք:

Երբ Մկրտիչ Թէրզեանին, անձնատպան վարժապետին համար, ազգ. թերթերը համակրական տողերով հանրային կարեկցութեան կոչում՝ ըրին անոր զաւկներուն ի նպաստ, — ինչ որ չի զլացուեցաւ, — մտածողներ ու ըսողներ ալ գտնուեցան թէ ի՞նչ պէտք ունէր խեղճ տղան ասանկ յուսահատ արարքի մը դիմելու. միթէ իրեն՝ օգնութեան հասնողներ չպիտի՞ գտնուէին:

Գարբիէլ Ներշապուհ, — գուցէ այս ամէնուն անտեղեակ, վառն զի մեր մէջէն բացակայ էր այդ թուականին, — իր դիմումովը, դժուարին ու դժկամակ դիմում մը, կարծես ըսել կուզէ մեզի անուղղապէս. «Ահա՛ ձեր հին մէկ դասատուն, որ այսօր, Խառնեղջի տարաբաղդ վարժապետին կացութեան մէջ, անկէ բոլորովին տարբեր կերպով կը մտածէ»: Ի՞նչ պատասխանենք իրեն:

Ֆէնէրի վարժարանին մէջ Պ. Սրաթարիսի ի պատիւ կատարուած հանդէսէն լաւագոյն ասիւթ մը չէր կրնար ներկայանալ Մաախի խմբագրութեան՝ յիշեցնելու համար ազգին, թէ Գարբիէլ Ներշապուհ, ինքն ալ չափական եւ բնական գիտութեանց ուսուցիչ մը, իր քառասուն տարուան արդիւնաւոր ուսուցչութենէն ետքը, հանդէս մը, ճառեր եւ ուղերձներ չէ որ կ'ակնկալէ՝ իր յոյն պաշտօնակցին պէս. այլ ատոնցմէ շատ պակասը:

Հարկ կա՞յ աւելի չեջտելու:

ԵՐԵՎԱՆ

ՄԵՐ ՊԱՇՏՈՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Մաախի խմբագրութիւնը հաճելի պարտականութիւն մը կը սեպէ իրեն՝ հրապարակային շնորհակալութիւն մը յայտնել Արեւելի խմբագրութեան որ այնքան համակրական տողերով ծանոց մեր շարքաբերքին վերբերումը: Շնորհակալութիւն նաև Բիւզանդիոնի և Սուր-

հանդակի խմբագրութեանց որոնք բարեկամութիւն ունեցան հրատարակելու մեր նախորդ թիւին բովանդակութիւնը:

Նոյնպէս շնորհակալութիւնեիս կը յայտնենք Բիւրակի որ ջերմագին ու անկեղծ խնդակցութեամբ ողջունեց իր այս երեքաբերքի թիւին մէջ՝ Մաախի վերբերումը ու շարունակութիւնը:

ԱՆՈՒՆԳ

Ճերմակ ձիւնին վրայ փափուկ
Գրեցի անունը խնկաւետ,
Թոյլ երազի պէս խուսափուկ
Ձիւնն հալեցաւ, անունդ ալ հետ:

Մանր աւազին վրայ ծովեզեր
Գրեցի անունդ որ զիս բովեց,
Հով մը ծովուն վրայ կը վազէր
Ծովն ուռեցաւ, անունդ աւրեց:

Թարմ եռնենւոյն վրայ փափկասուն
Ես քու անունըդ փորեցի,
Զմեռ եր, ծառն ամբան կիսուն
Միայն սալիներ ցուցուց ինձի:

Ծաղիկներով ածուին վրան՝
Գրեցի անունդ, իմ գեղունիս,
Օր մը ջանցած՝ անձրեւն ամբան
Աւրեց անունըդ ծաղկահիւս:

Ա՜հ, քու անունդ, հոգւոյս արև,
Գրեմ սրտիս մէջ արցունքով,
Ո՛չ ձիւն կիջնայ հոն, ո՛չ անձրև
Հոն քեզ պահեմ սիրոյս կրակով:

Կ. ՈՍԿԵԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Ա..

Աշխարհի վրայ ամէն ինչ ժամանակին երկար օղակներուն շարքին մէջ կրելով ներգործութիւնը մարդուն առաջդիմական ձգտումներուն, կը միտի առաջ բերելու հետզհետէ աւելի կատարելագործեալ արուեստներ, խրեւածալ ճարտարութիւններ, մշակեալ գրականութիւններ, նորանոր գիտութիւններ եւ վերջապէս՝ նոյն իսկ մարդկային բարոյքեալ ընկերութիւններ որոնք իրարմէ անհունապէս կը տարբերին: Այսօրուան սերունդը չէ այն ինչ որ էր երէկ եւ վաղուանը ապահովարար չպիտի ըլլայ այն ինչ որ է այսօր: Սերունդներու բարեւաւման այս ձգտումը, մարդուն ինքնապաշտպանութեան վրայ անդրադարձած

օրերէն ծագում առած՝ կը արեւ նոյն իսկ այսօրուան զարգացումի տարազով ներկայացող դարուս մէջ, ամէն օր եւ ամէն բանի համար, ամէնէն տարրականէն մինչեւ էականը: Սերունդ մը, ցեղ մը, եւ պարփակուելով նոյն իսկ անհատին մէջ՝ անձ մը ունի իր եռասիրական հակումը իր անձին, իր սերունդին հանդէպ որ ոչ մէկ բանով մը կրնայ փոխանակուիլ: Պայքարի կեանքը՝ որ այնքան սերտ առնչութիւն ունի մարդուն ֆիզիքական, բարոյական եւ տնտեսական բարեւաւման ճրգտումներուն հետ՝ խարխիւն է բոլոր այն մտումներուն որոնց կը դիմէ մարդ իր բոլոր կարողութիւններով: Այս նրդացած դարուն մէջ արտաքին բնական պատահարներուն դէմ ունի

անձնապաշտպանութեան չափ որչափ միջոցներ, իր սեփականութեան եւ անձնական իրաւանց պաշտպանութեան համար օրինագիրքեր եւ նիւթական բարեկաւութեան համար հոկող մարմիններ որոնք ծնունդ կ'առնեն նոյն խոյ մարդկային ընկերութենէն որ զանոնք կը ստեղծէ դիւրացնելու համար այն պայքարը որ կեանքի պայքար կը կոչուի :

Եւ արդէն քաղաքակրթութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ լոյրոր հեշտացուցիչ միջոցները այն պայքարին զոր մարդկային ընկերութիւնը ստիպուած է մղել ամէն օր, ապրելու համար :

Ամէնէն աւելի քաղաքակրթութիւնը կոչուած ժողովուրդները աներկբայ կերպով անոնք են որոնք ամէնէն աւելի շատ միջոցներ ունին իրենց կեանքի կռիւը հեշտիւ կատարելու :

Այս հեշտացումը ուրիշ բանով չէ կարելի ձեռք բերել եթէ ոչ մտաւորական զարգացմամբ՝ որ նոր միջոցներ կու տայ մարդուն իր կեանքը բարեկաւելու : Հետեւաբար կեանքի պայքարը դիւրացնելու համար պարզապէս պէտք է, մտաւորական ողջ դաստիարակութեամբ մը օժտուածներու ամբողջ դասակարգով մը կեանքի մէջ յաջողածներու եւ երջանիկներու թիւը աւելցնել :

* * *

Մենք առաջուց ի վեր մտաւորական խեղճ միջոցներով օժտուած ժողովուրդ մը՝ միշտ մնացած ենք հոն ուր որ կը գտնուէինք : Տգէտ ժողովուրդ մըն ենք բացարձակապէս եւ ապահով կրնանք ըլլալ թէ «Տգէտ ժողովուրդ մը՝ ծոյլ ժողովուրդի մը պէս մոլութիւններու որրանը միայն կրնայ ըլլալ» : Եւ արդէն տգիտութեան բոլոր աղետարեք ազդեցութիւնը այսօր կը կրենք վատաւորող դաստիարակութեամբ օժտուած սերունդի մը առջեւ գտնելով ինքզինքնին :

Ու այս բարոյական բացարձակ անկումին մէջ, ուր այսօր կը գտնուինք, օրէ օր վատթարանալու կը միտի նաեւ մեր տնտեսական կեանքը որ ասկէ հազիւ հինգ տասնեակ տանիներ առաջ մեզի չընկալատող ժողովուրդներէն աւելի տոկուն եւ զօրաւոր էր : Սեղանաւորական գործառնութեանց, առեւտրական յարաբերութեանց եւ երկրին բնական

հարստութեանց չահագործման մէջ Հայերը առաջին կարգին վրայ կը գտնուէին : Այսօր ատոնք յիշատակներ դառնալ սկսան մեզի համար, վրասն զի օժտուած չըլլալով կեանքի պայքարը մղելու համար անհրաժեշտ եղած դաստիարակութեամբ, չկրցանք նոյնիսկ մեզի ծանօթ միջավայրին մէջ մրցիլ օտար միջավայրներէ եկող եւ այս միջավայրին մէջ իր օտար գործող Եւրոպայիներուն դէմ որոնք աւելի իւրացուցած կեանքի պայքարին համար անհրաժեշտ եղած յատկութիւնները, աւելի չահաւէտ ասպարէզներու միջամուխ եղան, մէկ կողմէն անանուն ընկերութիւններու միջոցաւ չահագործելով ճարտարար ուսեստները եւ միւս կողմէն երկրի մը տնտեսական շարժման ջիղը եղող վաճառականութեան մէջ կարեւորագոյն բաժինը ունենալով : Մեզի բարոյական կորով, սղջմտութիւն եւ հեռատեսութիւն սակաւեցաւ, թոյլ չտալու համար որ այս ասպարէզները օտարներ իւրացնեն : Ատոնք ամէնն ալ պակասեցան մեզի, պարզապէս անոր համար որ ողջամիտ եւ առողջ դաստիարակութեամբ օժտուած սերունդ մը չկրցանք հասցնել, այնպէս որ այսօր մեզի շրջապատողները հսկայաքայլ առաջդիմութեամբ իրենց նիւթակտն կացութիւնը կը զարգացնեն, մինչ մենք օրէ օր աղքատանալու հակամէտ ուղղութեան մը մէջ կը գտնուինք :

Եւ ասիկա բնական բան մըն է որ տեղի կ'ունենայ, քանի որ մտաւորական զարգացման աննախանձելի աստիճանի մը վրայ գըտնուելով՝ չպիտի կարենայինք հետեւիլ մեր շուրջը կատարուած յառաջդիմութեանց՝ մեզի զրացի ժողովուրդներէ ետ մնացած չըլլալու համար :

Հետեւաբար տնտեսական կեանքին ալ, բարոյական կեանքին ալ յետադիմութեան միակ սկսածառը մեր մտաւորական կեանքին զարգացման աստիճանական բարեփոխմէն հետի ըլլան է՝ եւ որ նոյնն է՝ դաստիարակութեան տգեղ եւ աննպատակ ուղղութիւնն է :

* * *

Մարդու մը ծնած օրէն մինչեւ մեռած օրը ստացած բոլոր մտաւորական զարգացման

նպաստող տպաւորութիւնները կը կազմեն իր դաստիարակութիւնը :

Մեր հասարակութեան՝ ինչպէս նաեւ ուրիշ հասարակութեանց մէջ մարդկային բնկերութեան մտաւորական կեանքին ներգործող հաստատութիւնները եղած են դպրոցը , եկեղեցին ու մամուլը , այսինքն դաստիարակները , եկեղեցականները եւ գրադէտները որոնց կատարած դերը մարդկային մտաւորական զարգացման վրայ անուրանալի է :

Մարդ այս երեք տարրերովն է որ պիտի կազմէ իր մտաւորական կեանքը եւ անոր աստիճանական զարգացումը պիտի ապահովէ :

Հասարակութիւնները ստեղծելու ընդունակ չեն այնքան որքան հետեւելու , ուստի մարդ դպրոցէն դուրս ալ ստիպուած է իր մտքին սնունդ մը փնտռել : Այդ սնունդը իրեն պիտի տայ եկեղեցին՝ իր կղերականներուն բերնով եւ տպագրութիւնը՝ իր օրագրութեամբ , պարբերականներով եւ գիրքերով :

Առանց այս մտաւորական նոր պաշարներուն որոնք կեանքի փորձառութեան հետ իւրացուցած պիտի ամբարտին մեր ներսը , մարդ փոխանակ առաջդիմելու պիտի յետադիմէր , կորսնցնելով մտաւորական զարգացումը որ պիտի զրկէր զինքը այն նոր միջոցներէն որոնք կը ստեղծուին կեանքի պայքարը հեշտացնելու նպատակով :

Մտաւորական կեանքին՝ տնտեսական կեանքին հետ ունեցած աւելնողութիւնը եւ փոխադարձ ազդեցութիւնը ինքնին բաւական են ցոյց տալու թէ մտաւորական կեանքի երեք որորանները որչա՞փ կարեւոր դեր մը ունենալ կոչուած են մարդկային ընկերութեան մէջ՝ յաջողածներու եւ երջանիկներու թիւը բազմապատկելու համար :

* * *

Դպրոցական դաստիարակութեան մէջ որչա՞փ յետադէմ եւ ուղղմելի գրութեան մը մէջ գտնուելին ինքնին ապացոյց մըն է թէ մտաւորական ո՞ր աստիճան զարգացման մը մէջ կրնանք գտնուած ըլլալ : Տօկուն եւ առողջ նախնական կրթութիւն մը մեր մէջ վաթսու նական թուականներէն առաջ զգացուած

պէտք մըն էր եւ այսօր Իւրդ դարու սեմին վրայ նոյն պէտքը՝ պէտք կը մնայ , առանց աւելի կամ պակաս զերացած ըլլալու անոր լրումը : Ուսումնական խորհուրդներ իրարու յաջորդած են եւ իրաւամբ անոնց գործունէութիւնը խորհուրդ մնացած է՝ առանց նիւթական ու բարոյական որեւէ դրական առաջդիմութեան առջեւ դնելու զմեզ , վասն զի աւելի հին ազդեցութիւն մը բառնալու չեն բաւած իրենց ջանքերը : Այդ հին մոլութիւննիս կղերական ազդեցութիւնն է զոր կը կրենք շարունակ ամէն տեղ եւ ամէն պարագայի մէջ : Հինէն ի վեր կղերը դաստիարակութիւնը իր ձեռքերուն մէջ առնել նկրտած է : Անոր համար է որ Քրիստոնէական նախնական դարերու պարզութիւնը եւ օրինակելի կեանքը խանգարուելէ եւ յաւիտեանական կուսութեան անընական վիճակը երեւան ելլելէ յետոյ՝ կղերը աշխարհի ամէն կողմերուն մէջ միանգամայն ձգտում մը ունեցաւ դաստիարակութիւնը իւրացնելու եւ վանքերու մէջ վանական կեանքի խտուածութիւններով դաստիարակելու համող սերունդները :

Հռովմէական Եկեղեցիէն սկսեալ մինչեւ մեր պարզունակ Եկեղեցին՝ այս ազդեցութեանէն զերծ չմնացին : Վանքերը դաստիարակութեան կեղրոններ դառնալով՝ վանական կեանքի անընակութիւնները խմորուեցան հետզհետէ հասնող սերունդներուն մէջ :

Եթէ լատին կղերականը իր աշակերտներուն անօրինակ կեղծաւորութեամբ մը սորվեցուց թէ «կինը մեղք է , հետեւաբար անկէ հեռու փախչելու է» , հայ եկեղեցականն ալ դաստիարակութիւնը իր ձեռքը՝ առնելով մինչեւ ԺԷ-րդ դարուն կէսերը , անկէ առաւել կամ նուազ անընական եւ անօրինակ սկզբունքներ չսորվեցուց նորհաս սերունդներուն : Այս «կինը մեղք է»ի գաղափարը ուսուցանող վանականութիւնը՝ բնականէն հեռացած անընականին մէջ ամէնէն վատթար մոլորութեանց ենթակայ եղած էր եւ ԺԶ-րդ դարու իտալական վանականութիւնը անխոստովանելի մոլորութեանց մէջ ընկղմած էր զորս նկարագրելու համար Պոքաչիոյէն ալ աւելի բան մը ըլլալու է մարդ :

Մեր կղերը եթէ մինչեւ հոտ չինկաւ ,

եթէ այնչափ չվատթարացաւ, եթէ այդչափ չստորնացաւ հանգէպ իր կոչումին, գոնէ զուլաքաղութեան եւ չարաշահութեան հայեցակէտը ունեցողներ գտնուեցան իրենց աչքին առջեւ թէ՛ պարզ ժողովուրդին եւ թէ՛ նոր սերունդին հանդէպ՝ պատրաստելու համար ժողովուրդ մը որ ամէն տեսակէտով արժանի է «տիրացու ժողովուրդ» կոչումին:

Եւ այս հակումը այնքան խորապէս դրոշմուած է մեր մէջ որ այսօր 60-70 տարիէ ի վեր դատախարակութեան գործէն կղերականները գրեթէ բոլորովին հեռացուած՝ դարձեալ սերունդներ իրարու կը յաջորդեն միօրինակ չիբրով կղերական դատախարակութեան մը հետքով տողորուած եւ միշտ ու շարունակ տիրացու կոչումին արժանի:

Նախնական կրթութեան այս անդնական եւ պարսուելի ուղղութիւնը բաւական չէ, միւս կողմէն ալ մեր կրթական գործին մէջ կը տիրէ անսովոր անկանոնութիւն մը եւ շարժականութիւն մը, որ տիրացուական՝ թաղականի եւ հոգաբարձուի խնդիրներէն ծագում կ'առնէ եւ ամէն նախակրթարաններու վիճակը մէկ օրէն միւս օրը խանդարելու սպառնալիքին տակ կը ձգէ: Անոր համար է որ նախնական կրթութեան եւրոպայի զանազան մասերուն մէջ գտած առաջըլիմութեանց ոչ մէկէն օգտուելու բարեբաղդութիւնը ունեցած ենք մենք, մենք որ անօրինակ տուայտուումը մը իւրաքանչիւր օր, ամէն ժամ գրեթէ կրթական խնդիր մը ունինք մեր լեզուին տակ:

Մեր մէջ յաւիտենական դարձած այդ երկու խնդիրները — կրթական եւ եկեղեցական — այնքան սերտ առնջութիւն մը ունին իրարու հետ որ անկարելի է չընդունիլ նաեւ ուսուցիչներու եւ եկեղեցականներու համախոհութիւնը եւ իրարմէ կրած փոխադարձ ազդեցութիւնը որուն ներգործութեամբ ամբողջ սերունդներ խամրած են վարժարաններու մէջ եւ գուցէ դեռ պիտի խամրին:

Նախակրթութեան այս կղերական պայքարին շուրջը յաճու էրեւոյթը բաւական չէ կարծես. ուշադիր դիտող մը պիտի տեսնէ թէ մեր եկրորդական կրթութեան հաստատութիւններն ալ կղերական ազդեցութեան են. թակայ եղած են առաւել կամ պակաս:

Հնութեան բարձրագոյն ուսումնաւայրերուն՝ Դպրաւանքերուն յաջորդող հաստատութիւններ՝ Միսիթարեանց Մուրատեան եւ Ռափայէլեան վարժարաններէն սկսեալ մինչեւ Թիֆլիսի Ներսէսեանը, Թէոփսիոյ Ղալիպեանը, Սիլւատարի Ճեմարանը, Փրկչի Որբանոցը, Խասգեղի Նուպար-Շահնազարեանը, եւ նոյն իսկ Կեդրոնականը ու Պէրպէրեանը կրած են կա՛մ կղերականաց եւ կա՛մ տիրացուական — թաղային եւ ազգային — պատրիարքարանական խնդրոց հակազդեցութիւնը աւելի կամ նուազ:

Այսօր ընդունելու է թէ կղերական ազդեցութիւնը հակաիշուելու ջանքեր եղած են են մեր մէջ, առանց դրական արդիւնք մը ձեռք բերելու:

ԱՐԵԱԿ ԱԼՊՅԱԿԵԱՆ



Վերջալոյս՝ Նուրը, գրրգուուն բոյրեր օգին մէջ.
Իրիկնամուտն՝ հուր-անձրեւոտ՝ կը խոկայ.
Տիեզերքին խոնջ տառապանքն է անվերջ՝
Թափառելով երկնի կապոյտ սըրտին վրայ:

Իրիկնամուտն՝ հուր-անձրեւոտ՝ կը խոկայ
Ու ալեակներ կ'ըմպեն անոր յորդ կըսկիծ...
Մինչ երգի բոլ ծրեւն մ'անուշ՝ մօտակայ
Պատուանէն դուրս կ'երկարի լուսագիծ:

Ու ալեակներ ըմպեն անոր յորդ կրակիծ՝
Այն աղջկան խորհրդաւոր ու զմայլուն՝
Որ ցայգերգի բըրբուռմներովը անբիծ
Կը յուշերգէր հոն սիրոյ վիշտ մ'այլալուռ։

Այն աղջկան՝ խորհրդաւոր ու զմայլուն՝
Որ ինձ մոռցուց հրակայ խոհանքն երկրնքին՝
Լըռած է սկի ձայնն երբ կ'անցնիմ մոլորուն՝
Դիմել ծովափ իրիկուններն անձկագին...։

Մօսու

Մ. Ո.

ՔԱՌՄԷՆ ՍԻԼՎԱՐ

«ՈՐՔԱՆ ԴԻԻՐԻՆ Է ԵՂԵՐ»

«Մայրի՛կս, նամակդ կարդալով այնքան
արցունք թափեցի, որ աչքերս տակաւին ու-
ռեցած են։ Կարծես ամբողջ գիշերը լացեր
եմ։ Ո՛հ, ինչպէս կրնաս ըսել թէ վստահու-
թիւն չունիմ՝ քու վրագ, թէ բան մը չեմ
պատմեր քեզի, մինչ քու կարօտէդ կը մեռ-
նիմ։ Բայց, գիտես, մայրի՛կս, թէ ա՛լ ինք-
զինքիս տէրը չեմ բաւարարին, եւ երբ քեզի
գրել կուզեմ, միշտ բան մը, չեմ գիտեր ի՛նչ
բան մը կայ, որ ձեռքս կը բռնէ։ Ինձի ա-
նանկ կու գայ որ յանցանք մը գործած կ'ըլ-
լամ երբ քեզի պատմեմ բան մը՝ զոր ան
պէտք չէ կարդայ, կամ անոր նկատմամբ
զանդաւոր մը նմանի։

«Միշտ կը վախճամ որ չես հասկնար այն
չառ մը դժուարութիւնները որոնց կը հան-
դիսիմ։ Ես անգամ, չիտակը ըսելով, չեմ
հասկնար զանոնք։

«Հայրս չա՛տ վեհանձն, չա՛տ կատար-

եալ մարդ մըն էր, բնաւ թերութիւն չունէր,
միշտ համակարծիք էիք իրարու հետ։ Ինչ-
պէ՞ս կ'ըլլայ որ զիրար կատարեւապէս սիրող
անձեր միշտ համաձայն չըլլան իրարու։

«Արդարեւ, մենք ալ շատ կը սիրենք զի-
րար, անշուշտ մայրի՛կս, չա՛տ, եւ սակայն
մեր փոխադարձ սիրոյն մէջ խի, միշտ ան-
համաձայնութիւն մը կայ։ Ամէն բան, մին-
չեւ խի մեր խօսելու եղանակը կը տարբերի
իրարմէ, այնպէս որ ինչ որ մէկերնուս հա-
մար բնական է՝ միւսին արտառօց կ'երեւայ։

«Անհաւատալի ճիգեր կը թափեմ, գու-
շակելու համար իր աչքերուն մէջ ինչ որ կըր-
նայ զինքը զուարթացնել, ինչ որ կրնայ հա-
ճելի ըլլալ իրեն։ Բայց դեռ չա՛տ անճարակ
եմ։ Չեմ կրնար քուկիներուդ պէս հասկնալ
անոր փափաքները։ Յաճախ, զանոնք սխալ
կը մեկնեմ, մանաւանդ օտարականներու քով,
եւ, չնչին թիւրիմացութեան մը համար, ետքը
յանդիմանութիւններ կը ըսեմ։ Աղէկ գիտես,
մայրի՛կս, որ երբեք յանդիմանութեան վար-
ժուած չեմ, եւ շատ անգամ, դուն համբե-
րած ես իմ նեղսրտութիւններուս Արդ, ամէն
պարագայի մէջ, այս թերութիւնս ծածկել
կուզեմ անկէ։ Չեմ ուզեր որ ան կուահէ թէ
որքա՛ն զիրազրգիւ եւ բարկացող եմ։ Միշտ
երկայնամտութիւնն ու հըւթիւնը կը գոփէ։
Ուստի, ես ալ ամէն բանի կը համբերեմ։ Բայց

(*) Ե. Խ. — Մասնաւոր «Օտար էջեր»-ու բաժինը կը յատկա-
ցնենք, այս եւ յաջորդ Թիւին մէջ, Ռումանիոյ գրագէտ Թա-
գուհիին՝ Փառմէն Սիլվայի՝ գողտրիկ մէկ գրուածքին զոր
ղեւատի օրիորդ մը Թարգմանած է բնագրին համապատաս-
խանող սիրուն ոճով մը։ Հագիւ տարիէ մը ի վեր ամուսնա-
ցած մանկամարդ կնոջ մը իր մօրը ուղղած մէկ նամակն է
ասիկա, որուն մէջ կը բանայ իր սիրտը եւ որ ամուսնական
կեանքի պարզ հոգեբանութիւն մըն է, աւելորդ է ըսել թէ
հաճոյքով կարդացուելու արժանի։

յետոյ , խենդի պէս վախկոտ ու երկչոտ կ'ըլլամ :

« Կրնա՞ս երեւակայել քայս բանը : Քու աղջիկդ երկչո՞տ ըլլայ : Անհաւատալի չէ՞ , Աստե՛ն մը , սակայն , խելքիս փշածը կ'ըսէի եւ ամէնքը կը խնդային , կը զուարճանային . ամբողջ տուներնիս ինձմով կը զուարթանար : Հիմայ , նախ Լէոնին աչքերը կը փնտռեմ եւ երբ անոնց հանդիպիմ , ա՛լ աւելի վարանոտ կերպարանք մը կ'առնեմ , ու օրհասարի պէս միտքէս անցածը կ'ըսեմ : Կ'ապահովեմ գլքեզ որ երբեք այսչափ անմիտ եղած չունէի :

« Անցեալ օր երկու տարիքոտ կիներու դեռատի կնոջ մը վրայ խօսիլը լսեցի , — թեւրեւս իմ վրաս , աղէկ չեմ գիտեր — եւ անոնցմէ մէկը կ'ըսէր . « Այո՛ , երբեմն , մանկամարդ աղջիկները երբ ամուսնանան , որչափ որ առաջ վառվառն էին՝ այնչափ հանգարտ կ'ըլլան » :

« Երկար ատեն մտածեցի այս խօսքին վրայ , որովհետեւ սրահին մէջ բազմաթիւ կիներ կային , որոնք բնաւ հանգարտ չէին եւ կը խօսէին , կը խնդային երիտասարդներու շրջանակի մը մէջ : Կը նախանձէի անոնց ցայտուն խօսքերէն , որովհետեւ վստահ էի թէ ես ալ կրնայի անոնց պէս խօսիլ , միայն թէ իմ շուրջս եղողներէն ոչ մէկը ինձմէ ատանկ բան մը կը յուսար . իրենց ամուսիններուն շատ չարամտութեամբ եւ նոյն իսկ . . . անվայել կերպով մը կը պատասխանէին . բայց անոնք ատիկա սիրուն բան մը կը նկատէին : Լէոնն ալ անոնց միանալով կը խնդար հետերնին :

« Ինչո՞ւ մինակ ինծի հետ երբեք չի խընդար : Ինծի հետ խօսած ատենը անմիջապէս կ'ըսէ՝ « է՛յ , տղայութիւն չ'ուզեր » , եւ սակայն այդ միւս կիները աւելի արտասովոր բաներ չէին պատմեր , ոչ ալ ինձմէ աւելի գեղեցիկ են . բայց գլուխին աւելի ալէկ չտկե՛լ եւ իրենց հովհարին հետ խաղալով որո՞շ համարձակութեամբ մը ասդին անդին նայիլ գիտեն :

« Ա՛հ , այո՛ , եթէ միայն այդ ինքնավստահութիւնն ու համարձակութիւնը ունենայի . եթէ գէթ անգամ մը կարենայի համոզուիլ թէ ձանձրանալի չեմ , թէ մարդիկ հաճոյք կը զգան իմ խօսելէս : Սակայն ի՞նչ կրնամ ըսել

Շատ մը ճամբորդութիւններ րրած եմ , բայց անոնք ալ ըրած են , եւ չեն զուարճացած , ինչո՞ւ խիսնե՞րուս հետաքրքրուին : Ինչ գիրք որ ես կարդացեր եմ , կ'սմ յօրանջեալ կարգացած ըլլալ եւ կ'սմ երբեք ձեռքերնին գիրք առած չըլլալ կը ձեւացնեն : Տարիքոտ կիներ ամուսնական կեանքին վերաբերեալ խրատներ կու տան , եւ կ'ամ անմիջապէս զաւակ ունենալու միջոցը կը սորվեցնեն ինծի . « Խոչալէս կ'ըլլայ , ամուսնանալդ տարին անցնի եւ դեռ միշտ յոյս մը չ'ունենաս » : Այն ատեն կը կարմրիմ , կը շփոթիմ , եւ շուրջս կը նայիմ գտնելու համար հոն այն միակ անձը՝ որ մօր մը կերպարանքը ունենայ . այո՛ , մօր մը , որպէս զի խորհուրդ հարցնեմ իրեն , եւ սիրտս բանամ անոր : Բայց չեմ գտներ :

« Օր մը կին մը հարցուց ինծի թէ կարօտցե՞ր էի ծննդավայրս : Գլխու չարժուածով միայն այո՛ պատասխանեցի , որովհետեւ յուզմունքէս չկրցայ խօսիլ ա՛յն ատեն սկսաւ՝ իր ամուսնութեանը առաջին օրերէն ի վեր զգացած ծննդավայրի կարօտին վրայ խօսիլ :

« Ետքը Լէոն հարցուց ինծի թէ ի՞նչ բանի վրայ խօսուցած էինք այդ կնոջ հետ : Ըսի թէ իր երիտասարդութեանը վրայ խօսեր էր : Լէոն յօնքերը պռստեց եւ ըսաւ , « Աւելի աղէկ կ'ընէր եթէ այդ կէտին վրայ չխօսէր » : Սակայն այդ կինը իրա՛ւ անպատշաճ բան մը ըսած չէր ինծի : Ես ի՞նչ գիտնայի անոր անցեալը : Կ'երեւայ թէ Լէոն շատ մարդոց վրայ խայտառակ բաներ գիտէ , որովհետեւ անոնց վրայ շատ արհամարհանքով կը խօսի , մանաւանդ կիներուն նկատմամբ , ինչ որ ամէն անգամ մեծ վիշտ կը պատճառէ ինծի : Քանի որ զանոնք այդչափ կ'արհամարհէ , ուրեմն ինչո՞ւ անոնց բնկերութիւնը կը փրնտուէ : Ստուգիւ էրիկմարդիկ մեզմէ բոլորովին տարբեր շինուած են : Շատ բաներ կայ զոր չեն հասկնար : Չեն մտածեր թէ ի՞նչ բան կը վիրաւորէ զմեզ . եւ ամէն վայրկեան անտեղի ու անքաղաքավար բան մը կը գտնեն ըսելու : Երբեմն ալ , մարդ չափազանց խոնջ կ'ըլլայ , մեռնելու չափ խոնջ , եւ էրիկմարդիկ այդ բանին չեն հանդուրժեր , համբերութիւննին կը հատնի , եւ եթէ զայն ծածկել ուզես , ա՛լ աւելի անհամբեր կը դառնան :

«Ես այս բաները չեմ հասկնար : Ամուսնանալը բնական բան մը կ'երեւայ իրենց : Անոնց համար բան մը չի փոխուիր այդ կեանքին մէջ, մինչդեռ մեզի համար ամէն բան, բացարձակապէս ամէն բան նոր է : Ա՛լ առ ջիւնները չենք մնար մենք : Աւա՛ղ, մայրի՛կ, ինչո՞ւ համար կարելի չէ միշտ աղջիկ մնալ : Կը ծիծաղիմ, երբ հաճոյքի շարաթիւերուն, մեզ բաւարարողներուն վրայ կը խօսին շարունակ, եւ երբ կը տեսնեմ որ դեռատի աղջիկները բուն հետաքրքրութեամբ կ'ըզման զանոնք ճանչնալու : Հօրենական տանը մէջ է որ աղջիկները հաճոյքի շարաթիւեր, մեղրալուսիներ կ'անցրնեն : Հոն է որ տարիներ՝ ամիսներու եւ օրերու պէս կը սահին կ'երթան :

«Ընդհակառակը, երբ մարդ ամուսնացած է, օրերը տարիներ կը թուին : Չես կրնար հաւատալ թէ որչա՛փ ծեր՝ բոլորովին ծեր կը զգամ ինքզինքս : Կը զարմանամ որ տակաւին խորշումներ ու ճերմակ մազեր չունիմ : Աւա՛ղ, որչա՛փ պիտի ուզէի երբեմնի զուարթութիւնս վերստանալ :

«Կը յիշե՞ս, մայրի՛կս, այն խօլ զուարթութիւնս որով սեղանէ սեղան ու նստարանէ նստարան կը ցատկոտէի եւ ոտնացուպերով կը պտտէի : Երեւակայէ՛ որ այդ ոտնացուպերուս յիշատակը աչքերս արցունքով կը լեցնէ, իրբեւ յիշատակը բարեկամահիներուս Երբեք չեմ ըսեր Լէոնին թէ ոտնացուպերով կրնայի քալել, ի՞նչ պիտի ըսէր : Ամէն պարագայի մէջ, կը հարցնեմ ինքնիրենս թէ ի՞նչ պիտի ըսէ ան, եւ այն ատեն լուռ կը կենամ, ինչ որ իրեն տաղտուկ կը պատճառէ, որովհետեւ յօրանջելով լրագիրը ձեռք կ'առնէ : Բնականաբար, արցունքի խոշոր կաթիլներ խկոյն աչքերս կ'ողողեն եւ ինքնիրենս արեղցրեղ կը խօսիմ :

«Ուրեմն ինչպէ՞ս պէտք է խօսիլ էրիկ մարդոց հետ : Եւ սակայն դուն հայրիկիս հետ շատ անգամ երկար բարակ կը շաղակրատէիք : Եւ հայրիկս ոչ կը յօրանջէր, ոչ ալ լրագիր ձեռք կ'առնէր, բացի զայն կարդալու որոշուած ժամէն : Բայց ես, տեսայ Լէոնին առտուն ամբողջապէս կարդացած մէկ լրագրին վերստին կարդալը : Երբ մեկնեցաւ, նա յեցայ թէ ինչ էր կարդացածը, մաքսատուն-

ներուն եւ ներմուծութեան օրէնքներուն վրայ շատ ձոնձրանալի ճառ մըն էր :

«Չես գիտեր թէ որչա՛փ լացի . — Ինչո՞ւ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէ ուրիշ կիներուն պատմածները եւ ինչո՞ւ կը յօրանջէ երբ ես իմ վրաս խօսիմ : Թերեւս շատ դուրազած եմ, տշնպէս չէ՛ : Բայց այնչա՛փ չփացուցած ես զիս, տնո՛ւշ մայրիկս :

«Կը յիշե՞ս այն ժամանակը ուր, իրիկունը, վառարանին քով, առջեւդ ծռնկի եկած՝ քեքուշ մատներդ իմիններուս մէջ անցուցած, քեզի բաներ մը կը պատմէի անդադար . . . Եւ կամ մտիկ կ'ընէի քու անհատնում պատմութիւններդ : Ո՛հ, մայրի՛կ, որչա՛փ երջանիկ էինք երկուքս ալ այն ատեն : Երբ զքեզ երազիս մէջ կը տեսնեմ, բարձս արցունքով կը թրջուի միշտ : Երազիս մէջ յաճախ խորհուրդ կը հարցնեմ քեզի, բայց պատասխան տալու պահուդ, կ'արթննամ յանկարծ, առանց բան մը լած ըլլալու : — Ամբողջ ցորեկը, այնքա՛ն երկար ատեն միս միսնակ եմ, եւ չեմ վարժուած այդ բանին :

«Բնականաբար Լէոն կ'ուրախանայ՝ երբ իմանայ որ իրեն համար հառաչեր եւ քսան անգամ դէպի դուռը վազեր եմ, տեսնելու համար թէ կու գա՞յ . բայց մտքէն չանցրի երբ թէ ցորեկը երկար է, որչա՛փ ալ եռանդով աշխատիս, որչա՛փ ալ յոգնիս, տանդ վրայ հսկելու համար : Ժամերը օրեր կը թուին, երբ մարդ հարկը անգամ յիշէ թէ այսինչ բանը աղէկ ըրած չէ, թէ այնինչ բանին մէջ սխալած է, եւ ամէն վայրկեան ինքզինքը կշտամբէ, հիւանդ ըլլալու աստիճան : Արդարեւ, ժամանակէ մը ի վեր, միշտ ինքզինքս հիւանդ կը զգամ, երբ մտածեմ այս բաներուն վրայ : Անտանելի է ասիկա, բայց տկար, շատ տկար եմ : Բնականաբար, անոր բան մը չեմ յայտներ, որովհետեւ պիտի ըսէ. «Կին, ջիւղ, քմայք», եւ բոլոր այն տգեղ խօսքերը, զորս առաջ էի գիտեր :

«Դուն ալ ըսէ՛, մայրի՛կս, ջիւղ քմայք ունեցած եմ երբեք : Վարդ այտերով Սիւզանդ, զուարթ Սիւզանդ, քմայքներ ունենա՛յ : Մեծ ուղադրութեամբ ինքզինքս կը քննեմ, եւ այդ տեսակ բան մը չեմ գտներ իմ մէջս, միայն տեսակ մը վախ ունիմ, տարտամ վախ մը

զոր բացատրելու բառ չե՛մ գտներ :

«Ձեռքերս կը նիհարեան , դէմքս կ'երկրնայ եւ կը տփգունի : Նոյնիսկ կը տփգունեմ կոր հիմայ : Իրաւ որ , ստէպ ինքզինքս ծանրապէս հիւանդ կը զգամ , ստամոքսի քաղց-կեղ մը , թոքախտ եւ կամ ուրիշ սոսկալի հիւանդութիւն մը ունիմ կարծես : Պիտի մեռնի՞մ , ուրեմն , առանց Լէոնին հասկցնելու թէ որչա՛փ կը սիրեմ զինքը : Աւա՛ղ , երբեք չկրցայ պէտք եղածին պէս սէրս արտայայտել իրեն , եւ իրապէս ալ երբեք երջանիկ չըրի զինքը : — Այն ատեն , ոչ կին եւ ոչ ալ զաւակ պիտի ունենայ , եւ առաջուան պէս նորէն մինակ պիտի մնայ , խեղճ Լէոնն :

«Սրաէս արիւն կ'երթայ , երբ կը մտածեմ այս բաները , եւ մանաւանդ երբ կը մտածեմ թէ որչա՛փ երջանիկ պիտի ըլլար եթէ աւելի հետամուտ ըլլար սիրոյս : Իմ գործաւորութիւնս զայն պարտեւ ուզեր էի , բայց անկա չ'ուզեր , եւ փայտայանք ու քաղցրութիւն ցոյց չի տար ինծի : Այն ատեն ես ալ կը ջանամ խիստ երեսալ , եւ այսպէս իրբեւ ընկեր կ'աւարինք իրարու հետ , սա միակ տարբերութեամբ որ մեզմէ մէկը միշտ դուրսն է , մինչդեռ միւսը միս միսակ տունը կը կենայ : Երկուքնիս ալ չենք գիտեր թէ ո՛ր բաներն են որ զմեզ կը չարչարեն , երբեմն կը կարծեմ թէ աւելի աղէկ կ'ըլլայ , եթէ առաջուան պէս սրտամ կանչեմ երեսին , եւ դառն ու ուժգին պատասխաններ տամ իրեն : Պիտի սրդողի , բայց գոնէ չպիտի ձանձրանայ . սակայն կը վախնամ եւ նոյն իսկ կը սոսկամ ամուսնական կեանքի վէճեր յարուցանել : Միտքս դրած էի որ ամպ մը երբեք չպիտի գար մթազնել մեր ներքին կեանքը , եւ հիմակ իմ այդ կապոյտ երկինքիս ներքեւ ինքզինքս չախշախուած կը զգամ , եւ արեւէն ու փոշիէն կը խեղդուիմ : Վերջապէս աւելի աղէկ էր որ քանի մը ամպեր գային ու անցնէին : Հիմակ , ա՛լ ժամանակը անցաւ : Երկար տառն է որ անձրեւ եկած չէ եւ ամպերուն ալ կուտակուելու ոյժը չէ մնացեր : Երբ շատ սիրտս կոտորելիք խօսք մը ըսէ , անոյշ մը կը ժպտիմ իրեն , եւ բերանս չեմ բանար , կարողի բնաւորութեանս վրայ հպարտանալով : Իսկ ան , ընդհակառակը , չորդուելուս համար կարծես կը վիրաւորուի :

«Այնպէս հլու եւ այնպէս ծաղրելի կերպով հնազանդ եմ , ինչ որ խորանին առջեւ ուխտած էի ըլլալ : Երբ բան մը հրամայէ , իսկոյն կը կատարեմ . . . եթէ չմոռնամ սակայն : Ձեմ գիտեր ինչէ՛ն է որ , մայրի՛կս , ժամանակէ մը ի վեր մոռացկոտութիւն մը կայ վրաս : Իրաւ , շատ թերութիւններ ունիմ վրաս :

«Ինչպէ՞ս կրցեր ես այնչափ համբերել այս յանցանքներու , մայրի՛կս : Վատն զի դուն մայրիկս էիր , եւ ոչ ամուսինս . ամէն բան բնական կը գտնէիր , որովհետեւ մանկու թիւնս տեսած էիր : Բայց , ան , հազիւ տարի մըն է որ զիս կը ճանչնայ , անկէ առաջ օտարական մըն էի իրեն համար . նոյն իսկ գոյութիւնս չէր գիտեր : Ինչո՞ւ ուրեմն կարծեց որ զիս կը սիրէ : Այս մասին ալ սխալած ըլլալու է , ինչպէս ուրիշ շատ մը բաներու մասին : Յաճախ , երբ կը քնանայ , երկար տառն ակնապիշ կը դիտեմ զինքը , որովհետեւ այն ատեն անոր աչքերը՝ սրոցմէ , բարէ՛ , այնքան կը վախնամ , փակ են , եւ կամայ մը կ'ըսեմ . «Խեղճ , խեղճ մարդ . ինչո՞ւ չեմ կրնար մէյ մը ազատել զքեզ ինձմէ , ինչո՞ւ չեմ կրնար անհետանալ յանկարծ , մեռնի՛լ , որպէս զի ազատութիւնդ գտնես նորէն եւ ուրիշի մը հետ կարենաս երջանիկ ըլլալ » :

«Աւա՛ղ , մայրի՛կս , չա՛տ կ'ուզեմ մեռնիլ : Մտածէ՛ մէյ մը , քու զուարթ Սիւզանդ մեռնի՛լ ուզէ : Խնդալէդ չե՛ս մարիր : Սակայն մի՛ խնդար , մայրի՛կս , իրաւ կ'ըսեմ : Եւ յետոյ , ամէնուն՝ նոյն իսկ քեզի համար յուսախտութիւն մը եղայ : Այնչա՛փ հոգ տարիր կրթութեանս որ քեզի պէս պատուական կին մը՝ տիպար ամուսին մը ըլլամ :

«Ամուսնութեանդ սկիզբները ի՞նչ զգացիր դուն արդեօք : Այսչափ դժուար բան մը ըլլալը չէի՞ր գիտեր . ինչո՞ւ բան մը չըսիր ինծի . ինչո՞ւ չիմացուցիր թէ շատ մը դժուարութեանց պիտի հանդիպիմ :

«Ո՛հ , մայրի՛կ , կ'ուզէի զգեստիդ ծալքերուն մէջ երեսս պահել , որ այնքան տաքուկ է , եւ ուրկէ մայրիկի հոտ մը կու գայ Ո՛հ , միտակ զգեստներուդ անուշ հոտը յիշելով՝ կարօտէս կը մեռնիմ կոր :

« Լէոնը ի՞նչ պիտի ըսէր եթէ այս բաները

լէր : Պիտի կարծէր թէ զինքը չեմ սիրեր : Դուն ալ հարկաւ այսպէս ծննդավայրի կա-
րօտ ունեցած ես , ի՞նչ կ'ընէիր երբ այդ կա-
րօտը գար վրադ : Ես մերթ թաշկինակս կը
խածնեմ , ոտքերս գետին կը գարնեմ եւ
կը ջանամ կլլել այն խոշոր գունդը որ կոկոր-
դիս մէջ կը գոյանայ եւ չուզէր վար իջնել ,
կ'ատեմ տունս , որ այնքան գեղեցիկ է սա-
կայն , եւ աշատուհանիս տեսարանը սիրտս կը
սեղմէ : այն ատեն , բոլոր վարագոյրները կը
քաշեմ , այնպէս որ լէռն ներս մտած ատենը
կը գոչէ . « Վա՛յ , այս ի՞նչ մութ սենեակ է » :
Ամէնքն ալ կը բանայ , որ լոյսը ներս մտնէ .
ցուրտ եւ գորշագոյն լոյսը՝ որ միեւնոյն փո-
ղոցէն կու գայ լուսաւորել , միեւնոյն տխրա-
տեսիլ եւ հաւասարապէս ձանձրալի առար-
կաները սենեակիս :

« Իսկ ես չնորհալի կերպով մը կ'ըսեմ ի-
րեն . « Այսօր շատ գործ ունէի՞ր » : Կը տես
նես որ շատ բնական եւ անմնաս հարցում մըն
է ասիկա , այնպէս չէ՞ , մայրի՛կս , բայց լէռն
կը պատասխանէ ինծի . « Քեզի վերաբերեալ
բան չկայ : » Եւ դուրս կ'ելլէ կամ գիրք մը
կ'առնէ : Մինչդեռ ես հոն կեցած անթարթ
երեսը կը նայիմ , մինչեւ որ ըսէ . « Դուն գործ

չունի՞ս » : Անշուշտ գործ ունիմ միշտ , երբ
ինքը հոն չէ , բայց տուն գալէն ետքը , իրմէ
զատ ուրիշ բան չեմ տեսներ , եւ ա՛լ բանով
մը չեմ կրնար զրադիլ :

Յանցա՞նք մըն է ասիկա , մայրի՛կս , Սոր-
վեցս՛ւր ուրեմն ինծի թէ ի՞նչ ընելու է , Ա-
ւա՛ղ , որքան կը փափաքէի կատարեալ կին
մը ըլլալ . թերեւս պարզապէս իմ մէկ տխում-
բութեանս արդիւնքն է , երեւակայական բանի
մը միշտ յուսալս , եւ որուն իրականութիւնը
բոլորովին տարբեր պէտք է ըլլայ : Շիտակը
ըսելով , ես ալ չեմ գիտեր թէ ի՞նչ էր մտա-
ծածս , որովհետեւ ամուսնութեան վրայ եր-
բեք խորհած չունէի : Ինծի չա՛տ , չա՛տ հե-
ռու կ'երեւար տակաւին . եւ յանկարծ այն-
քան մոտեցաւ , որ բոլորովին տիրեց վրաս :
Վստահ եմ , մայրի՛կս , թէ կին ըլլալու չափ
հասունցած չէի դեռ , պէտք էր որ սպասէի
տակաւին , եւ կամ երբեք չամուսնանայի :
Թերեւս ունեցած թերութիւններս կատարեալ
ամուսին մը ըլլալուս արգելք կ'ըլլան : Պէտք
էր որ զանոնք կանխաւ իմացունէիր ինծի , եւ
կամ , դուն ալ չէ՞իր գիտեր :

Թարգմ. ՊԵՐՃՈՒՆԻ

(Մ'նացորդը յաջորդ թիւով)

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Հում միսը կամ անոր հիւրը՝ բոֆալտին դիմ . — Մութին մեջ տեսնելու համար ակնոց .

— Իպոկրատի ծառը Դոս կղզիին մեջ :

Բաւական ժամանակ է որ Բրօֆ . Ռիչէ՛
ականաւոր բժիշկը՝ կենդանեաց վրայ շատ մը
փորձերէ վերջը , հաստատեց թէ հում միսը
թոքախտը բուժելու յատկութիւնը ունի : Այս
մասին տեղեկան թերթերու մէջ արդէն գոր-
ուած էր , կարծեմ : Նոր յօդուածով մը ,
Տոքթ . Ռիչէ՛ յետագայ կերպով կը սահմանէ
այս նոր դարմանին գլխաւոր կէտերը .

Ա. Հում միսը կարգիլէ թոքախտային վա-
րակման առաջ գալը եւ կը բուժէ զայն :

Բ. Հարկ եղած եւ բաւականաչափ հում

միսին քանակն է ամէն մէկ քիլօկրամ մարմ-
նոյ կշռին համար 12 կրամ : Ըսել է որ եթէ
մէկը 60 քիլօ կշտէ , 60 անգամ 12 կրամ ,
այսինքն 720 կրամ հում միս պէտք է ուտէ
օրը :

Գ. Հում միսէն հանուած միտական ջուրը
կամ չիճուկը հում միսին գործօն տարրերը
կամ սկիզբները կը պարունակէ :

Դ. Եփած միսը հում միսին պէս չաղգեր
եւ այս դարմանին արդիւնքը չափազանց
աննդառութեան (suralimentation) վերագ-
րելի չէ :

Մինչեւ հիմայ վերոյիշեալ չորս առաջագործութիւններէն առաջինը միայն յայտնուած էր, բայց Բրօք. Ռիչէի պարզած տեսութեանէն բոլորովին տարբեր տեսակէտով, Հոմ միտք պատուիրուած էր իբր աւելի դիւրամարս սնունդ մը, չարտադանց սննդատուութեան ենթարկուած անձերու համար իբր աւելի դիւրատար: Անոր ամէն արդիւնքները դիտելու համար տրուած քանակութիւնը բազմաթիւ շատ քիչ էր: Ուստի հոմ միտք իբր մասնատու գեղ (spécifique) չէր նկատուեր, այլ պարզապէս ուրիշ տաեղիքներէ աւելի գերամարս սնունդ մը:

Հստ Բրօք. Ռիչէի, հոմ միտք դեղ մըն է. Արգի բնասիւնները ցոյց տալէ վերջը մարսնայ քանի մը գեղձերուն անջատութեանց (sécrétions) մէկ քանի թոյներ կամ աւելի ճիշդ՝ մանրէաթոյներ (toxines) ջնջելու յատկութիւնը, սա նկատուած է հասած են թէ կազմութեան բոլոր խորշերը կամ բջիջները (cellules) կարող են հակաթոյներ պատրաստելու: Գոյութեան պայքարին մէջ մարդկային կազմութիւնը պատերազմի գաշտ մըն է. ամէն մէկ բջիջ պատերազմող զինուոր է. թշնամի բանակը կը բաղկանայ արշաւող միքրոպներէ: Բջիջները հիւթեր կարտադրեն ուրոնք պատերազմի գաշտին վրայ սիրտուելով իրենց հակառակորդ միքրոպները կը թունաւորեն, զանոնք անկարողութեան կը մատնեն եւ միանգամայն այդ արտատու միքրոպներուն հեռաձիգ գէնքը կազմող մանրէաթոյնները կը չեզոքացնեն: Երբ մեր բջիջները այլ եւս անկարող կը դառնան ըստ բաւականին հակաթոյներ արտադրելու, կրնանք օգտակարապէս կենդանեաց միսերուն պարունակած հակաթոյները իւրացնել եւ այդ օգտակար հիւթերը՝ հոմ միտք ճնշման ենթարկելով հանուած ջուրին կամ շիճուկին եւ կամ նոյն իսկ հոմ միտքին մէջ ձեռք ձգել: Հոմ միտքին հիւթը առնելու եղանակը մեծ ծառայութիւններ կը մատուցանէ այն հիւանդներուն որոնք օրը 600 կամ 800 կուամ հոմ միտքն կրնար կուտ տալ, եթէ այդ միտք աղով կամ չաքարով համեմուած գնդիկներու ձեւին ներքեւ իսկ տրուի: Բայց հիւթի ձեւով առնուածը 1000 կամ 1500 կուամ միտք հան-

ուած մասհիւթ տալու է հիւանդին: Տաքութիւնը տարբադարելով ամէն տեսակ հակաթոյները, միտք անպատճառ հոմ պէտք է ըլլայ իր յատկութիւնը չը կորսնցնելու համար:

Այս դարմանը միմիայն մարտողական խանգարումներ ունեցող թոքախտաւորներու վերապահելու չէ. նկատելու չէ հոմ միտք իբր փորհարութիւն կամ փոխում չը պատճառող թեթեւ սնունդ, այլ դեղ մը որ գնդակախոր (tuberculose, վէրեւի) ամէն ձեւերն ալ կը բուժէ եւ պէտք է գործածուի ամէն պարագայի մէջ եւ հիւանդութիւնը սկսելուն պէս:

§ Տոքթ. Թէլիօ բժիշկը վերջերս ամենաւարեւոր գիտ մը լրացուցած է. հնարած է ակնայ մը որով մութին մէջ կը տեսնէ մարդ, եւ այդ տեսութիւնը այնչափ մանրազնին է որ կարելի է լրագրի կարգաւ, գետինը ինչպէս մանր առարկաները փնտռել եւ այլն: Այս ակնոցները գոգաւոր եւ կործնարդ ապակիներէ կը բաղկանան որոնց մէջ տեղը նուրբ թաղանդ մը կայ որուն բնութիւնը եւ պատրաստութիւնը հնարչին գաղտնիքն է: Փրանսացի բժիշկ մը որ առիթ ունեցեր է այդ ակնոցին մէկ օրինակը տեսնելու, կրտէ թէ կատուի աչք մըն է ճշդիւ որ տեսութեան համար այն է ինչ որ է հեռաձայնը հեռագրին. հիացմամբ կը պատմէ թէ այդ նոր ակնոցին շնորհիւ կրցած է կատարելապէս մութ տեղի մը մէջ սիրտուած շատ մը մանր առարկաներ հաւաքել, եւ իրիկուան ժամը 7ին առանց լապտերի երկար գետուղի մը մէջ պտտիլ: Փրանսական ընկերութիւն մը իսկոյն այս գիտը գնած է մէկ միլիոն ֆրանքի որ մասնավոր հնչուն զրամով պիտի վճարուի եւ մասնավոր ալ գիտը շահագործելու համար կազմուելիք ընկերութեան արժէթուղթերով:

§ Բարիգեան բժշկական Հանդէս մը կը գրէ թէ Արշիպեղազոսի Գոս կղզին մէջ կը կենայ եղեր տակաւին այն ծառ որուն ներքեւ բժշկութեան հայրը՝ Իպոկրատ՝ իր դասերն աւանդած է ասկէ 2500 տարի առաջ: Զիշդ է՝ պատմուածը, կը հարցնէ: Այդ ծառը սօսի մըն է եղեր որուն տերեւները ամէն գարնան կը բուսնին, բայց անոր ամէնէն խոշոր երկու ճիւղերը աղիւսներու սիւներով բռնուած են: Յիշեալ Հանդէսը կը խնդրէ այն ամէն ճամբորդներէն որոնք անկէ պիտի անցնին՝ որ այս իրողութիւնը տուագեն եւ եթէ կը հաճին՝ տեղեկացնեն իրենց հետազոտութեան արդիւնքը:

ՏՈՒԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Մ Ի Ր Ի Կ

Իր բուն անունը Միհրան էր, բայց ժողովրդական լեզուով «Միրեան» կը կոչէին զինքը ընկերները, ու աւելի բաղադրել ու զօղները՝ «Միրիկ»։ Պատուոյ տիտղոս մըն էր ասիկա իրեն համար, ազնուաշուքի պէս բան մը որուն չէին կրցած արժանանալ իր դասակարգէն ուրիշ Միհրաններ որոնք զուրկ էին իր սրտատուծէնէն։

Հազիւ երեսուն տարեկան, բարեձեւ հասակով, թուր գեղեցիկ աչքերով, կայտառ երիտասարդ մըն էր Միրիկ, անուս, ուսմիկ, հազիւ գիտակից աշխարհի այն իրերուն ուրունք կը զրաղեցնեն զմեզ ամէն օր, բայց իր ազդեցութեանը ու ռամկութեանը տակ պահելով վեհանձն ու ազնիւ սիրտ մը որ ճշմարիտ անձնութիւններու կը մղէր զինքը իր բարեկամներուն նկատմամբ, երբ պէտք ունենային անոնք իրեն։ Մէկը այն տիպարներէն որոնք կը կորստին ամբոսին մէջ, անծանօթ ապրելու եւ մեռնելու սահմանում, բայց եթէ ընկերային սանդուխին գտնէ միջին աստիճաններուն վրայ գտնուէին, ուշադրաւ դէմքեր պիտի դառնային։

Միրիկ իր կեանքին վերջին չորս-հինգ տարիները ծովի վրայ անցուցած էր, առանց սակայն արհեստով ձկնորս ըլլալու, տեսակ մը մօլեգին սիրով ինքզինքը տուած ալիքներու քմայքին որոնցմէ դուրս վայելք չէր ճանչնար։ Իր սրտին բոլոր դորովը, իր հագին ամբողջ հրայրքը երկու բանի միայն նուիրած էր. մօրը եւ... ծովուն։ Իր նախկին բոլոր սովորութիւններէն հրաժարած, գինեառունէն, ընկերներէ, զրօսանքէ, մօայլ, մեհասէր մարդ մը դարձած էր այն միջոցին երբ ճանչնայ զինքը զիսկուածով։ Իր հին մէկ ծանօթէն, որ հետը կը գտնուէր այն միջոցին, իմացած էի թէ ինչ չէն տղայ մըն է եղբի ատենօք, ու հետաքրքրուելով այս այլախոսութիւն, իրիկուն մը հարցուցի իրեն՝ աշխարհքէ

զգացած զգուանքին ու ծովուն համար ունեցած տարիանքին գաղտնիքը։

Վէտ մը չէր իր պատմելիքը. կը գուշակէի առաջուց. բայց Միրիկ իր անտաշ սնովը ու պարզուկ լեզուովը, որուն մէջ նուրբ բացատրութիւններ չէին որ կուգային լեզուին ծայրը, այնպէս ազդու կերպով բացաւ ինծի իր սիրտը, որ զգացի թէ կեանքի իրական պատկերի մը տալեւ կը գտնուէի։ Զինքը այդպէս զգեստնողը՝ առաջին սիրոյ մի պատրանքն էր, որ իր վերջին սէրը եղած էր, մէկ անգամէն, հատու նշգրախի մը պէս խլելով իր սրտէն այն բոլոր անոյշ զգայութիւնները որոնք մաքուր սիրոյ մը շուրջը կը ծնին, եւ դարձնելով զինքը շա՛տ աւելի ճշմարիտ blasé մը քան ինչ որ չէն ըլլար աշխարհիկ կեանքի մէջ յուսախաբուածէն յուսախաբուածեան դիմող ու մերժուած սէրերէ յուսահատիլ չգիտցող «ընտէնկոգաւոր թիթեռնիկները»։

Մանկամարդ աղջիկ մը իր դրացիներէն, քիչ շատ կրթուած ու բուական ազուր, սիրած էր Միրիկը. իրենց երկուքին ընտանեկան բարքերէն անբաժան խոտութիւններ աւելի՛ զօրաւոր, աւելի՛ խորհրդաւոր դարձուցած էին այս սէրը որ ո՛չ զգայուն նամակներով կ'արտայայտուէր ո՛չ ալ վաւախուն խօսակցութիւններով։ Այն հաղուագիւտ վայրկեաններուն մէջ ուր երիտասարդը բաղդ կուսննար իր ջղուտ ձեռքերուն մէջ առնելու իր ծաղկաւոր նշանածին փափուկ ձեռքերը, լուռ ու գողահար կը մնար տղու մը պէս, ինքը որ մէկէ աւելի ասիկներով ահա ազդած էր ուրիշներուն, իր փողոցային կեանքի օրերուն մէջ։ Հիմա, նոր մարդ մը երեւան կուգար իր մէջ, վասն զի սէրը նոր յայտնութիւն մը, անծանօթին յայտնութիւնը եղած էր իր կոյս սրտին համար։ Այդ աղջկան չրթունքներէն կ'ստուած կը զգար ինքզինքը, իր գոյու-թիւնը անոր գոյութեանը կապուած, եւ ա-

ռանց անոր՝ անէտնալու սահմանուած : Եւ անկէ հեռու գտնուած միջոցներուն , հարսնիքը միայն կ'երազէր , միացնելով իր աղքատիկ քսակին բոլոր խնայողութիւնները ու կրկնապատկելով իր ձեռարուեստին աշխատութիւնը , իր ապագայ կնոջը երջանկութեանը համար :

Օր մը յանկարծ , միջնորդ կնկան մը շահամուլ մեքենայութեամբ , իր երազած այս բոլոր երջանկութիւնը տակնուվրայ եղած էր : Նշանը ետ զրկեր էին աղջկան կողմէ «խլամէթ չէ եղեր» առանդական բանաձեւով : Միւրիկէն լաւագոյն պայմաններու մէջ ապրող երիտասարդ մը թեկնածու ներկայացած ու աղջկան ծնողքին սիրտը շահած էր :

* * *

Երբ իր պատմութեան այս կէտին հասաւ , նշմարեցի որ խօսակցիս աչքերը վայրագ նայուածք մը կ'արձակէին , թերեւս բռնադրօսիկ կերպով , ամէնալավ դուրս տալէ յուզմունքի արցունքները զորս դժուարաւ կը զսպէր , թէ եւ տարիներ անցած էր այս պարզ , այս շատ սովորական դէպքէն ի վեր որ իրեն համար աշխարհի մեծագոյն պատահարը կը մնար սակայն :

Բիրտ մէկը , իր տեղ , այս տեսակ անուղիղ կապի մը առջեւ , գայթակղութիւն պիտի հանէր թաղին մէջ . կամ առանց սիրոյ ամուսնանալու հետամուտ մէկը՝ արհամարհոտ շարժումով մը ուրիշ աղջկան մը դուռը ափ պիտի առնէր : Միւրիկ ո՛չ մէկը ընելու անապշուտութիւնը կը գտար իր մէջ եւ ո՛չ միւսը ընելու անտարբերութիւնը : Ո՛չ սրիկայ մըն էր , ո՛չ գարավերջիկ մը , իր ստակութեանը մէջ՝ տեսակ մը երկիւղածութեամբ համակուած կը մնար դեռ՝ իր պաշտումի առարկային խուսափումը տեսնելով . եւ իր խաբուած ու գառնացած սրտէն պոսթիկացող սէրը տտելութեան փոխելու տեղ , — որ կրնար մինչեւ վայրագութեան մը մղել զինքը , — նուիրած էր զայն , գրեթէ անգիտակցաբար , ուրիշ գիցուհիի մը , ծովուն , որուն քմահաճոյքներուն ու սարսուռներուն մէջ պիտի մոռնար իր սուգը , եւ զոր պիտի կրնար սիրել մինչեւ իր մահը :

Իր նշանուածքին խզուելուն վրայ շատ չան-

ցած , ուրիշի մը փոխանցած էր իր պզտիկ խանութը , անոր շահուն ընկեր մնալու պայմանով , — ապրուստ մը ապահովելու համար իր մօրը , — եւ ինքը նաւակ մը գնելով՝ ձկնորսութեան եղած էր : Հիմակ , ծովն էր իր սիրուհին , իր նշանածը , իր կեանքին ընկերուհին որուն բազուկներուն մէջ մեռնիլ կըղձար : Առաջինէն՝ իր երջանկութիւնը սպասած էր ու չէր գտած . վերջինէն՝ իր մահը կը փնտռէր ու չէր գտներ : Եթէ մայր չունենար , վայրկեանի մը գործ էր իրեն համար մեռնիլը , ինչպէս խոստովանեցաւ շէտով մը՝ որուն մէջ անկեղծութիւն կար . բայց չէր ուզած անձնասպան ըլլալ . եւ կըղձար , կը սպասէր որ մահը գոյ իրեն , ալիքներուն ու հովին միջոցաւ , մութ , ահաւոր գիշեր մը , ձիւնին բուքին տակ :

Ամբողջ բանաստեղծութիւն մը կար այս ժողովուրդի զաւկին մտածելու , զգալու ձեւին մէջ՝ սիրային անհաւատարմութեան մը հանդէպ որ խորտակած , քայքայած էր զինքը հոգեկան կերպով :

Ու կը նկարագրէր ինծի , այդ միեւնոյն իրիկունը , ուր իր կեանքին պատմութիւնը պատմեց , — աննշան դէպք մը՝ որուն մեծ վիպասանութեան մը բոլոր խորհրդաւորութիւնը կու տար ինքը , իր կրած խորունկ տպաւորութեամբ , — թէ ի՞նչ տենդոտ հաճոյք , ի՞նչ հրապոյր կար իրեն համար՝ ամէնէն փոթորկալից գիշերները , երբեմն միս մինակը , ցամաքէն հեռանալուն մէջ , անվախ , անփոյթ , ալիքներուն դէմ իր մղած պայքարին սաստկութեանը մէջ փնտռելով մեղմացումը իր ցուլին : Ա՛լ հիմա կատարեալ ձկնորս մը եղած էր ինքը , անով կը վանէր իր կարճատեւ երջանկութեան յիշատակները , անով միայն հնարը կը գտնէր խոյս տալու կարգ մը աղքատիկ աղջկաներէ որոնք իր պառաւուկ մօրը շուրջը պատած՝ անոր հարսը ըլլալ կերպէին :

* * *

Այն գիշերէն ետքը , երկու-երեք օր ալ տեսնուեցանք իրարու հետ , առանց այլեւս խօսքը ընելու իր կորուսած սիրոյն : Խեղճ տղան , որ սէր բառն իսկ չիկնելով արտասա-

նած էր իր պատմութեանը մէջ, ամօթալի խոստովանութիւն մը ընողի կերպարանքը ունէր իմ դէմս, — այնքա՛ն անծանօթ հրապոյր մը, հոգեցունց զգացում մը երեւցած էր իրեն սէրը՝ իր կարճատեւ երեւումին մէջ, — ու անգամ մըն ալ բերանը չի բացաւ այդ նկութին վրայ:

Իր հետքը չատոնց կորսնցուցած էի, — ըսի արդէն թէ դիպումս ուղի մը տեսած էի զինքը, — երբ անցեալները, ձմեռնամուտի ահաբեկ փոթորիկին լրագրական վտիտ նկարագրութիւններուն մէջ, Միհրան անուն ձրկնորսի մը խղճուելուն լուրը կարդացի:

Ի՞նչ Միհրանս էր արդեօք, Միրեանը, Միրիկը:

Զմեռքցայ զինքը. ընդհակառակը, երնէկ

տուի: Սիրային դժբաղդութեան մը մէջ՝ անձնասպանութենէ քաշուող, բայց մեռնիլ ուզող երիտասարդի մը համար՝ է՛ն երջանիկ մահն էր այդ որուն կըղձար ինքը արդէն տարիներէ ի վեր: Իր գաղտնիքը իր հետ տալու ալիքներուն խորը: Վրան լացողները, — եթէ լացող մը ունէր մօրմէն զատ, — անշուտ սա սովորական մտածումը ունեցան թէ ձկնորսութիւնը տխուր ու արկածալից արհեստ մըն է: Ոչ ոք գիտցաւ թէ Միրիկը, — այն անուս, ռամիկ երիտասարդը որուն վարք ու բարքէն չէր գուշակուեր թէ սիրոյ վրայ գաղափար իսկ կրնայ ունենալ, — սիրոյ զոհ մըն էր, վէպի մը հերոսը ըլլալու արժանի սրտի տէր:

Տ. Ա.

«ՄԱՍԻՍ»Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Ազգ. Հիւանդանոցին ի նպաստ երկու տարիէ ի վեր արուած Ընտանեկան Նուագահան. դէսը այս տարի ալ կազմակերպելու նախապատրաստութիւններ կը տեսնուին, եւ կը լսենք թէ Հոգաբարձութիւնը կը խորհի նօթութիւններ աւելցնել յայտագրին վրայ, օրինակի համար՝ արուեստասէր երիտասարդներու կողմէ թատերախաղ մը, ինչ որ չահեկան պէսպիսութիւն մը պիտի ըլլայ այդ բարեգործական ու գեղարուեստական հանդէսին համար որուն փայլուն յաջողութեանը բաղձացող ենք:

Նպաստից Յանձնաժողովի երեք քարթի օրուան նիստին մէջ, որ գումարուեցաւ Ս. Պատրիարքին նախագահութեամբ, կարեւոր խորհրդակցութիւններ կատարուեցան որբերու ապագայի խնդրոյն վրայ, եւ նկատելով որ որբանոցներու փակումէն վերջը որբերը պէտք պիտի ունենան մէյմէկ փոքր դրամագլխի, իրենց սորված արհեստին գործիքներն հայթայթելու եւ օրապահիկին ճարելու համար, Յանձնաժողովը սկզբունքով ընդունելի դատեց անոնց մէյմէկ գումար սահմանելու պէտքը եւ որոշեց հարկ եղած միջոցները ձեռք առ-

նել այս նպատակին յաջողութեանը համար: Միեւնոյն նիստին մէջ որոշուեցաւ հրաւիրել որբանոցներու Հոգաբարձութիւնները՝ որպէսզի արհեստանոցներու արտադրութիւններէն մէյմէկ նմոյշ զրկեն Պատրիարքարան:

«Մսածռքիւնիֆ սօնախան օրեռու» անուանի տակ՝ իմաստասիրական գեղեցիկ հատոր մը յանձնուած է տպագրութեան: Այս հատորը կը կազմեն՝ ընկերային, կրօնական, ընտանեկան նիւթերու վրայ Գիսալի հրատարակած հմտալից յօդուածներուն շարքը Բիւզանդիոնի մէջ: Ուրախ ենք որ յարգելի յօդուածագիրը, որուն գրուածքները այնքան ախորժով կարդացուեցան, զանոնք առանձին գրքի մը մէջ ամփոփելու գաղափարն ունեցած է:

Սարգիս Էֆ. Համալեւնեան, Օսմ. Հանրալին Պարտքի Վարչութեան գոմիսէրը՝ Բէժիի մօտ, այս երեք քարթի գիշեր յանկարծամահ եղաւ Բերս, իր բնակարանին մէջ: Յուզարկաւորութիւնը հանգիստաւոր կերպով կատարուեցաւ հինգ քարթի առտու, Ս. Երրորդութիւն եկեղեցին: Սարգիս Էֆ. կանուխէն մտած էր պետական ծառայութեան մէջ ուր

մինչեւ Խարիճ/յէի Ա. քարտուղարութեան կարեւոր պաշտօնին բարձրացաւ : Վարած է նաեւ Հռոմի օսմ. դեսպանութիւնը երկու տարի : Ի վարձատրութիւն իր բազմադիմի ծառայութեանց , Պալայի աստիճանին եւ Ա. կարգի Մէճիտիյէ ու Գ. կարգի Օռմանիյէ պատուանշաններուն արժանացած է : Սարգիս էֆ. Հա. մամճեան իր հմտութեամբ , արժանիքով ու ընկերային ձիրքերովը պատուաւոր տեղ մը զբաւած էր միշտ բարձր դասու շրջանակներուն մէջ :

Խառն ժողովոյ վերջին նիստին մէջ եկեղեցական խնդրոյ մը մասին տրուած որոշումները պարունակող գրութիւն մը ղրկուեցաւ Երեսողէմի Ս. Պատրիարքին :

Մոնթեղիէի համալսարանին գիտութեանց ճիւղէն այս տարի շրջանաւարտ ելեր է բնիկ Սամաթիացի հայ երիտասարդ մը , Պ. Միւռոն Զիլեան , որ տեղւոյն բժշկական վարժարանը մտեր է :

Բարեպաշտական նուէր . — Ծանօթ սե. ղանաւոր Բարսեղ էֆ. Սթամպուլուեան՝ որ Սամաթիոյ Եէնիմահալէ թաղի Ս. Յակոբ եկեղեցւոյ վերաշինութեան գործին վերակացու կանգնած էր , յանձն առեր է իր անձնականէն նուիրել ծախքէն պարտք մնացած 1705 ոսկին : Խառն ժողովը գոհութեամբ իմանալով այն կարեւոր նուիրատուութիւնը՝ անօրինեց որ Բարսեղ էֆ ի անունը քանդակուի յիշեալ եկեղեցիին ճակատը , եւ շրջափակին մէջ դամբանի տեղ որոշուի , ինչպէս առաջարկած էր Տնտեսական Խորհուրդը՝ տեղւոյն Թաղական Խորհրդին խնդրանքով : Եկեղեցիին վերաշինութեան բոլոր ծախքը եղած է 2443 ոսկի որուն 698 ոսկին ժողովրդական հանգանակութեամբ վճարուած :

Ապաշխարութիւն . — Պանորմա-Պալքէ. սէրի առաջնորդական Տեղապահ Դուրեան Տ. Թաթուլ վրդ. Արմաշու Դպրեվանքը գնաց ուր պիտի մնայ ժամանակ մը՝ Խառն ժողովոյ որոշումով , առանց Կեղրանի արտօնութեան Պանորմայի մէջ կրկնամուսնութիւն մը կատարած ըլլալուն համար :

ԷԶՄԻԱԾՆԷՆ ԼՈՒԻՐԵՐ

Ս Լուսաւորչի նուիրական ոսկորներուն գտնուելու շուրջ , որ հասած է Թիֆլիզէն , շարժուա մէջ բաւական զբաղեցուց ազգ. օրաթերթերը եւ հետաքրքրեց հայ ընթերցողները : Ահաւասիկ քանի մը ծանօթութիւններ այս կարեւոր գիւտի մասին .

Ս. Գրիգոր Լուսաւորչի ոսկերաց գիւտը կատարուած է , կր գրեն Էջմիածնէ , Առաւարի Ս. Գրիգոր եկեղեցիին հիմնաքարերուն տակ : Ն. Ս. Օծութիւն Հայրապետին հրամանաւ Խաչիկ Վ. Դատեան ամիսներէ ի վեր պեղումներ կը կատարէր այն տեղւոյն վրայ , ուր եկեղեցական պատմագիրները մատնանիչ կ'ընէին նոյն եկեղեցւոյ դոյութիւնը : Առաւարի Ս. Գրիգոր եկեղեցին կը գտնուի Էջմիածնի վանքէն իբր մէկ ժամ հեռու վանքապատկան հողերու մէջ , Վաղարշապատէն Երեւան տանող պողոտային վրայ : Աւազուտ ամսոյի դաշտագետնին վրայ հեռուէն աչքի կը զարնեն արդէն աւերակները հին եկեղեցիին , ուր դեռ չորս ամիս առաջ ծածկուած անձանօթ կը մնար այդ նուիրական հնութիւնը , եւ այսօր ամէն Հայու սիրտ իրեն կը ձգէ :

Էջմիածնէն կր գրեն թէ՝ տպարանական վարչութեան նախագահ Աշոտ Վ. Շախեան հրաժարեր է իր պաշտօնէն եւ անոր տեղ դեռ ուրիշը չէ նշանակուեր : Վանական վարչութեան անդամներն ալ պիտի փոխուին եղեր :

Հայրապետական գիւտէ ելած յայտարարութիւն մը կ'իմացնէ բոլոր հոգեւոր վարչութիւններու թէ՝ բնիկ Ալաշկերտցի Խաչատուր քչնյ. Տէր Յարութիւնեանց որ այժմ Կարսի եւ Ալեքսանդրոպոլի վիճակին մէջ կը պաշտօնավարէ , ապօրէն եւ աններկի պատկեր կատարած եւ անպատշաճ վարմունքներ ունեցած ըլլալով , ի սպառ կարգադրի եղած է , եւ ասկէ վերջը սոսկ աշխարհական կրնայ ճանչցուիլ :

Արսօնասէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինճանճըլար խօզուշու, Թիւ 27

ԻԻՆԻՅՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻՒՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան Դրամատունն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պալկարիոյ Տնօրէն

Սիւնն եփ. Բաշուքեան

Կենաց ճիւղին Տեսուչ

Միհրան եփ. Տէր Ներսիսեան

Գ. Պոլիս, Կալաթա, Թահթապուրուն խան
Օսմ. Պանքայի գէմ:



ROSSIA — ROUSSIE



Ա. ՊԱ. ՀԻՐՎԱ. ՊԵՐԱ. ԿԱ. Ն. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՅՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրութեան գումար

34,775,642 ֆրանք

121,765 888 »

164,172,000 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

Կերպարանեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մախսան քիմ սեղը

Ընդհ. ֆոնդի

Ա. ՀԻՐՈՄԻՏԻՉ

Ընդհ. Գործակալ
ԹԷՌՏՈՐ ՌԷՔԲԷՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852

ՏԲԹ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ — ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396, ՄԵՐ ՓՈԼՈՑ ԲԵՐԱ, 396

(Նանքի գաւեցրասան վրայի յարկը, ճիշդ Զրպուհեանց դէմը)

Կատարեալագործեալ գործիքներու միջոցաւ ամենաառաւելի ցաւած աղօտները մեկ անգամ անգամ կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորաշնար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ զիմացկուն արհեստական աղօտներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դիմքի ձեւաւորութիւն ըստ արիքի, ծանոցութիւն եւ ազատ արտասանութիւն երաշխաւորուած:

Բերնի հիւանդութիւնք կատարեալապէս կը բուժուին ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու եւ ամենակատարեալագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն:

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ (միւս օր) ինչպէս նաեւ ամէն օր (միւս օր) կես գիշեր) հիւանդ կ'ընդունին:

Ծանօթ. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ ԶՈՒՆԻՆՔ:

Կ Ի Ն Ն Ի Բ Ի Ե Ի Օ Ր Ի Ո Ր Դ

Թարգմանութիւն Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆԻ

Էջ 430

Բնախօս-բծիւկը չափահաս օրհորդաց ժիզիփական եւ բարոյական զարգացումը ինքնակրթութեամբ կարելի ընելու համար պատրաստած է այս գիրքը, որ իր հայերէնի թարգմանութեամբը կոչուած է զգալի պակաս մը լեցնել մեր գրական հրապարակին բնախօսա-առողջապահական աշխատանքներէն զանցառ շարքին մէջ:

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ Է ԱՅՍ ԳԻՐՔԸ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ:

Ամանորի առթիւ իրենց աղջկան կամ խօսեցեալին տալիս նուէրին ընտրութեան վրայ մտածող հայրեր, մայրեր եւ խօսնայրեր լաւագոյն նուէրն քած պիտի ըլլան՝ հայրայթելով անոնց օրինակ մը այս գրէն, որուն պարունակութեան ընծայելիք բարոյական ու ժիզիփական օգուտները համեմատաբար շատ եւ շատ մեծ են, ուրիշ որ եւ իցէ նուէրի մը նիւթական արժէքէն:

Յանձնարարութիւնք այժմէն կ'ընդունուի

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, Ֆիննանճըյար, Կ. Պոլիս

Թղթակազմ 10, Լաթակազմ 15, Ոսկեզօծ 20 դահեկան:

1901

ՏԱՃԿԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ, ՔՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵԶՈՒԱԻ

ՕՐԱՅՈՅՑ – ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, Պաշպլ Հատուզ, Կ. Պոլիս:

Կը գտնուի Պոլսոյ եւ Գաւառաց բոլոր Գրավաճառներու

եւ Թղթավաճառներու բոլ

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԳՆՈՂՆԵՐՈՒ ԳՈՀԱՅՈՒՅԻԶ ԶԵՂԶ

Ա. Կազմ 3 Ղր.

Բ. Կազմ 5 Ղր.